AMX Armenia Securities Exchange

**Գ Լ Խ Ա Վ Ո Ր  Տ Ն Օ Ր Ե Ն Ի  Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**30 հոկտեմբերի 2023 թվականի N ՑՊ-039-10/23**

**ք. Երևան**

**«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ, ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Bbond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով 2023 թվականի սեպտեմբերի 14-ին «Հայաստանի ֆոնդային բորսա» բաց բաժնետիրական ընկերությանը (այսուհետև՝ Օպերատոր) ներկայացված «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Թողարկող) 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում ցուցակելու վերաբերյալ հայտը և 2023թվականի հոկտեմբերի 11-ին ներկայացված հայտի լրացումը, ինչպես նաև Ցուցակման հանձնաժողովին 2023 թվականի հոկտեմբերի 12-ին ներկայացված եզրակացությունը,

Հաշվի առնելով, որ ներկայացված պարտատոմսերը և Թողարկողը բավարարում են Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» (այսուհետև՝ Կանոններ) 12-րդ գլխով սահմանված պահանջներին, և ղեկավարվելով Օպերատորի Կանոնների 15-րդ գլխի 70 կետի 1-ին ենթակետով, և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.52) կետի ե) ենթակետով, Գլխավոր տնօրենը

***Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Է՝***

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 5,000,000 ԱՄՆ դոլար ընդհանուր անվանական ծավալով, 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 36 ամիս շրջանառության ժամկետով, տարեկան 5% արժեկտրոնային տոկոսադրույքով, 50,000 հատ անվանական, արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMUNIBB2MER7 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի երկրորդային (Bbond) ցուցակում, շնորհել UNIBBM հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Հայտերի ներկայացումը և գործարքների վերջնահաշվարկը կատարել ԱՄՆ դոլարով:
3. Սույն որոշման ընդունման օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում որոշման մեկ օրինակն ուղարկել Թողարկողին:
4. Սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով համապատասխան ստորաբաժանումների կողմից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 02-ին:

**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ** **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**